

# Մ Ի Պ Տ Ո Յ Տ Ե Ր Ե Ի Ա Ն Ո Ւ Մ

( Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ի Մ Շ Ա Կ Ո Յ Թ Ի Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Յ Ն Հ Ա Ս Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Մ Է Զ )

Անանիսի խմբագրից քանիցս առաջարկութիւն ենք ստացել ամիսի մի գաղափար տալ Հայաստանի գիտական-քաղաքակրթական բարձր հաստատութիւնների մասին. սիրով կատարում ենք նորա ցանկութիւնը, հաւատացած լինելով որ արտասահմանեան հայ ընթերցողներին որոշ չափով բաւականութիւն պիտի պատճառենք մեր այս համառօտ նկարագրութեամբ: Այդ հաստատութիւններն են Համալսարանը, Գեղարուեստական Գալոցը, Կոնսերւատորիան, Թանգարանը, Մատենադարանը, Հնութեանց Պահպանութեան Կամիւրան, Գիտութեանց ու Արուեստի Ճեմարանը (Ինստիտուտ) եւ Թատրոնը:

1. Համալսարանը ամենից անհրաժեշտ հաստատութիւններից մէկն է պետական եւ քաղաքակրթական կեանքով ապրող ամեն ժողովրդի համար. նորա պէտքը զգացուած էր դեռ եւս դաշնակցական կառավարութեան ժամանակ եւ բացուած էր պատմա-լեզուաբանական ֆակուլտետը. երկրորդ տարին պիտի բացուէր իրաւաբանականը եւ ապա հետզհետէ միւս բաժինները, բայց հայ-թրքական պատերազմի հետեւանքով փակուեցաւ այն, ինչպէս փակուած էին էջմիածնի ճեմարանը եւ միւս գալոցները:

Խորհրդային իշխանութեան եւ իրաւակարգի հաստատութեամբ հետզհետէ սկսան բուժուիլ պատերազմի հասցրած ծանր վէրքերը, նիւթական շինարարութեան հետ տեղի ունեցաւ նաեւ քաղաքա-

կրթական կեանքի կանոնաւորումն ու յառաջադիմութիւնը:

Ներկայ Համալսարանը բացուած է 1921 թուին՝ նախկին սոււցչական Սեմինարիայի շէնքում՝ սկզբում՝ երկու ֆակուլտետով՝ սոցիալական եւ բնագիտական, իսկ 1929—30 թուին հինգ ֆակուլտետ ունէր, գիւղատնտեսական, բժշկական, մանկավարժական (որի մէջն են մտնում պատմագրական, բնագիտական եւ ֆիզիկ ու մաթեմատիկական ճիւղերը), սոցիալիական-անտեսական եւ տեխնիքական կամ ճարտարարուեստի (քաղաքացիական շինարարութիւն, ճանապարհների եւ հիգրոտեխնիքական), ընդամենը 1350 երկսեռ ուսանողներով: Գասախօսների ընդհանուր թիւն է 158 (պրոֆեսորներ, գասախօսներ, լաբորանտներ եւ ասիստենտներ), որոնցից քառասունը պրոֆեսորներ են եւ հարիւրը գասախօսներ: Համալսարանի վարչութիւնը կազմուած է մի քեկտորից, երկու պրոֆեսորներից եւ երկու անգամ պրոֆեսորներից, ապա իւրաքանչիւր ֆակուլտետ ունի իր գեկանատը՝ մի գեկան, երկու անգամով եւ քարտուղարով: Համալսարանի խորհուրդը կազմում են վարչութեան եւ գեկանների հետ հինգ պրոֆեսոր, հինգ գասախօս եւ այլ հաստատութիւնների ներկայացուցիչներ: Համալսարանի բիւջէն 29—30 թուին համար նշանակուած էր 1,162,888 ռուբլի, 28,500 ռ. էլ գործուղուսների համար, մինչդեռ 28—29 տարուայ համար 751,187 ռ. էր: Բիւջէի այսպիսի աճումը

ապրոցոյց է Համալսարանի արագ զարգացման (1):

Բայց այդ զարգացման ամենապակասը իր յայտարարն է այն շինարարութիւնը, որ կողուած է Համալսարանի կարիքների հետ: Մենք յիշեցինք, որ 1921 թուին բացուած է այն նախկին ուսուցչական Սեմինարիայի շէնքում, բայց բաժանմունքների ընդարձակմամբ՝ պէտք է աճէր եւ նորանոր շէնքերի եւ հաստատութիւնների, կլինիկաների, լաբորատորիաների եւն, կարիքը սկզբնական շէնքի շուրջն այժմ ստեղծուած է մի ամբողջ արուարձան՝ Համալսարանական արուարձանը՝ տանեակ մեծ ու փոքր շէնքերով՝ համաձայն գիտութեան եւ տեխնիկայի պահանջների: Պատրաստ է մանկարարական բաժնի շէնքը՝ Գարուհի Յակոբեանի անունով՝ կից Լենինեան կլինիկային, ակնաբուժականը Մարի Նաբարի անունով, անատոմիկումի վիճակարի շէնքը, քիմիական մեծ լաբորատորիան, կաթնատնտեսականը, հանրակացարանը պրոֆեսորների համար, իսկ ուսանողականը 500 հոգու համար շուտով պիտի սկսուի շինել, աւայժմ՝ 200 հոգի տեղաւորուած են փայտի բարակներում, 250 հոգի էլ առանձին շէնքի մէջ: Նախապատրաստութիւն են տեսնուած աստղագիտական գիտարանի, երեխաների կլինիկայի, Համալսարանի գրագարան-լնթերցարանի եւ հետազոտական ինստիտուտի շինութիւնների համար: Համալսարանական արուարձանի ծրագիրը կազմել է ճարտարագետ ակադեմիկ Ա. Թամանեան 24 հեկտար տարածութեան վրայ, որ կցում ենք յօդուածին (Պատ. 1), ընթերցողին զազափար տալու համար (2):

(1) Ներկայ 30/31 ուս. տարուանից վերանում է Համալսարան կոչումը եւ ֆակուլտետները պիտի վերածուին մասնագիտական բարձր դպրոցների, իւրաքանչիւր իւր գեկավարով եւ վարչութեամբ:

(2) Համալսարանից տարբեր մի բարձրագոյն դպրոց է *Քասաճարուժական Ինստիտուտը*, ուր, հակուռակ համալսարանի, դասախո-

2. Համալսարանի հետ բարձրագոյն դպրոցների շարքում պէտք է յիշուին Նկարչական Ինստիտուտը եւ յատկապէս Կոնսերվատորիան: Առաջինը ոչ միայն նկարչութեան ուսուցիչներ է պատրաստում միւս տիպի միջնակարգ եւ ժողովրդական դպրոցների համար, այլ եւ կերպարուեստի աշխատատեղեր, ընտրելագոյն ընթացաւարաններին հնարաւորութիւն տալով պետական հաշուով կատարելագործելու իրենց արուեստը Մոսկուայում կամ Լենինգրադում: Իսկ Կոնսերվատորիայի նպատակն է ոչ միայն երաժիշտ ուսուցիչներ պատրաստել, այլ եւ ստեղծագործող եւ էստադրային, ինչպէս եւ ժողովրդական երաժշտութեան հուարման եւ ուսումնասիրութեան աշխատատեղեր:

Կոնսերվատորիան բացուել է 1921 թուին իբրեւ երաժշտական դպրոց եւ 1924 թուից վերածուել ներկայ դրութեան, առաջին աստիճանի, տեխնիկումի եւ Բուհի (բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւն) բաժանմունքներով: Տեխնիկումին կից է արեւելեան երաժշտութեան եւ օրկեստրի դասուանդութիւնը գործնականի հետ եւ ապա հանրակրթական դպրոցների համար երաժիշտ ուսուցիչներ պատրաստող բաժինը: Կայ եւ բանուորական ֆակուլտետ, բանուորների մէջ երաժշտական կրթութիւն տարածելու համար եւ վերջապէս Բուհի համար աշխատատեղեր պատրաստող բաժինը: Մասնագիտական առարկաներն են դաշնամուր, լարային եւ փողային գործիքներ, ձայնի մշակութիւն, նմբալսարանական դասընթացը, տիրիժեորական եւ տեսական պատրաստութիւն՝ մանկավարժական եւ ստեղծագործական թեքմամբ:

սովորեցնող կատարում են ուսուց լեզուով, որովհետեւ այդ հաստատութիւնը *համակողկատեան* է, եւ այստեղ ուսանում են շայերի հետ, նաեւ վրացիներ, ատրեշանեան քուրքեր եւ լեռնային Հասարակապետութիւնների կամ ինքնավար շրջանների երիտասարդ քաղաքացիներ, որի համար եւ առանձին շէնք է շինուած 900,000 ռ.ի սահմանում:


Ուսանողների թիւը 500 է, մեծամասնութիւնը իգական սեռին պատկանող, գըլխաւորապէս ձայնի (vocal) եւ դաշնամուրի մասերում, աւելի քիչ լարային եւ օրկեստրային բաժիններում, յառաջագէմներից ընտրելագոյններն ուղարկւում են Մոսկուա, Լենինգրադ կատարելագործուելու իրենց մասնագիտութեան ճիւղերում:

Նորաբողբոջ կոնսերվատորիան հետզհետէ երաժշտական արուեստի մի հնոց է դառնում Հայաստանում: Սպենդիարեանը, թէեւ պաշտօն չունէր, բայց կապուած էր սերտ սիրով կոնսերվատորիայի հետ. նորաստեղծագործութիւնները, յատկապէս «Ամաստ» օպերան, մեր երաժշտական արուեստի լաւագոյն ծաղիկն է, որ ներկայացման է արժանացել Մոսկուայում եւ Օդեսայում: Նորա մահը շատ մեծ կորուստ էր հայ երաժշտական արուեստի եւ գիտութեան համար, որովհետեւ արուեստագէտը նոր նոր սկսել էր ծանօթանալ ընտելանալ հայ ժողովրդական երաժշտութեան եւ կենցաղին. որ անգրագաւնում էին եւ նորաստեղծագործութիւնների վրայ: Անուշաւան Տէր Դեւանդեան, չորս տարի կոնսերվատորիայի ղեկավարը, ունի մեծ քանակութեամբ օրկեստրային եւ vocal գըրուածքներ, որոնցից նշանաւորն է «Սեդա» օպերան (Շանթի «Հին Աստուածներ»ից) եւ զուտ օրկեստրային սուիտներ: Սպիրիդոն Մելիքեան, մեր կոմիտաս Վարդապետի աշակերտներից, իւր երաժշտական ուսումը կատարելագործել է Գերմանիայում, հայ ժողովրդական երգերի հաւաքողն եւ ուսումնասիրողը, որ շարունակում է եռանդուն կերպով իւր ուսուցչի սկսած գործը: հրատարակել է Շիրակի ժողովրդական երգերի մի ժողովածու, գրել է «Կոմիտասի ստեղծագործութիւններն ու մեթոդաւորութիւնը» վերնագրով ուսումնասիրութիւնը, ձայնագրել է Գարդաշեանի հետ Վանայ ժողովրդական երգերը, եւ խմբագրել կոմիտաս Վարդապետի 300ի չափ ժողովրդական երգերի ժողովածուն, որ պիտի հրատարակուի շուտով Պետական Հրատարակչութեան կողմից:

Մեր փոքրիկ երեւանը կամայ կամաց երաժշտական քաղաքի հոչակ է ստանում, որ գրաւում է իւրհրդային Միութեան եւ եւրոպական նշանաւոր արուեստագէտների կոնցերտներ տալու: Կոնսերվատորիան օժանդակ է հանդիսանում նաեւ Միութեան չափանիշներով սկսուած գիտական արշաւանքների, որոյիսին Լենինգրադի կոնսերվատորիայի ազգագրական - երաժշտական էքսպեդիցիան էր, ուսումնասիրելու Հարաւային Կովկասի կենցաղական երաժշտութիւնը, գրի առնելու ֆօնօգրաֆօնով ժողովրդական եւ աշուղական երգերը, գործիքների երաժշտութիւնը, սրպէս նիւթ համեմատական երաժշտութեան համար:

3. Գեղարուեստի եւ պատմա-հնագիտական խոշոր հաստատութիւն է Թանգարանը, իւրհ. Հայաստանի փառաւոր ստեղծագործութիւններից մէկը՝ կուլտուրական ճակատում: Երեւանի Թանգարանը, ընդամենը իւր տասնամեայ գոյութեամբ, որակով եւ ընդարձակութեամբ այնպիսի կերպարանք է ստացել, որ պատիւ կարող է բերել ոչ միայն մեր փոքրիկ եւ նորակազմ Հայաստանին, այլ եւ աւելի մեծ եւ երկար ժամանակ պետական կեանքով ապրող ժողովրդի: Դա մեր պարծանքն է, մեր իրական ապացոյցը՝ թէ հայ ժողովուրդը չէ կորցրել իւր պատերի ունակութիւնը գըրուարութիւնների մէջ իսկ ստեղծագործող լինելու:

Թանգարանը գետեղուած է ցարական շրջանից կիսաւարտ մնացած վարժարանի մեծ շէնքում, որ կարգի բերելուց յետոյ, վերին յարկի մի թեւը յատկացուած է Թանգարանին, իսկ ներքեւի յարկը Հանրային Մատենադարանին: Այս շէնքի մէջ են հաստատուած Կուլտուրայի Տունը, որ մեծ հաւաքոյթներն են լինում եւ երաժշտական կոնցերտներ, ինչպէս եւ Գիտութեանց եւ Արուեստի Ինստիտուտը: Թանգարանը քաղկացած է հետեւեալ մասերից. ա) Հնագիտական, բ) Պատմական - Գրական, գ) Ազգագրական եւ դ) Գեղար-



**Պատկեր 1.— ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԸՆԴԵԱՆՈՒՐ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ**

ուեեստական բաժին. նոր կազմակերպուել են սկսում ճարտարապետական եւ յեզպիրո- իական բաժինները:

Ա) Հնագիտական բաժնի մէջ գետեզ- ուած են նախապատմական գարերի մնացորդները, գլխաւորապէս Ե. Լալայեանի պեղումներով եւ կարմնեանցի ժողովածուի մնացորդներից կազմուած, իսկ պատմական շրջանը ըստ մեծի մասին ակադեմիկ Մառի Անիում կատարած պեղումների մնացորդներն են կամ պատահաբար ձեռք բերուած եւ ստացուած նուէրներ: Հայաստանը հնութիւններով հարուստ երկիր է նախապատմական գարերից սկսած մինչեւ վերջին ժամանակները. այս կողմից մեր թանգարանը մեծ հնարաւորութիւններ ունի զարգանալու եւ կարող է կարելորակեղ բաներ նման հաստատութիւնների մէջ Առաջաւոր Ասիայի պատմութեան Լուսաբանութեան նկատմամբ, եթէ նիւթական եւ գիտական աւելի յաջող պայմաններ ստեղծուին ասպագայում: Ոչ միայն նախապատմական եւ ուրարտական շրջանից քիչ բան գիտենք, այլ եւ հայ քաղաքակրթական կեանքի եւ պատմութեան առաջին շրջաններից, ասպագայ պեղումներից պիտի սպասենք այն լոյսը, որ պիտի փարատէ մեր կատարեալ խաւարը Վաղարշապատի, Դուլինի, Արտաշատի կուլտուրաների մասին, որոնք անպայման նոր հորիզոններ պիտի բնանան հայ արուեստի եւ քաղաքակրթութեան պատմութեան առաջին շրջանների եւ յարաբերութիւնների մասին շրջակայ և ժամանակակից ազգերի հետ:

Ե. Լալայեանը պեղումներ է կատարել Էջմիածնի, կոտայքի եւ նոր Բագայիդի կամ Գեղարքունեաց գաւառում եւ ստացած արդիւնքը՝ քարի եւ բրոնզի գարերից՝ դասաւորել առանձին դարակներում եւ պահարաններում: Նշանաւոր է հին կառքը նոր Բայազիդի պեղումներից, բայց վատ պահուած, եւ բրոնզէ գօտին իւր երկրաչափական եւ կենդանական զարգարանքներով, ասպ զէնքի, զարդարանքի, գերեզմանային արարողութիւնների հետ կապուած

իրեր, անօթներ եւլն.: Պատմական շրջանի իրերը մեծ մասով կապուած են Անիի պեղումների հետ, որ միայն մի մասն են այն հնագիտական հարստութեան, որ, ինչպէս յիշեցինք, ակադեմիկ Մառի երկարամեայ եւ անխնայ աշխատանքով հաւաքուած էր Անիի թանգարանական երկու շէնքում, բայց մեծ մասը ոչնչացաւ կամ մնաց Անիում պատերազմի պատճառով, եւ միայն համեմատաբար փոքր մասը հնարաւոր եղաւ ազատել կորստից՝ Մառի աշակերտ Աշխարբէգի ձեռքով: Այդ իրերն են, որ Անիի յատուկ բաժինն են կազմում:

Այստեղ դասաւորուած են սլաւափ պեղումներից հանուած գիբսի բուսական- կենդանական-երկրաչափական զարգարանքները, որ մեծ ազերս են ցուցադրում մանրանկարչական եւ ճարտարապետական արուեստների հետ. գործուածքներից նշանաւոր է Հոնենց Տիգրանի գերեզմանատանը գտնուած առիւծն ու ձագը կենդանութեան ծառով: Հարուստ են յասկապէս բրուտագործական արտադրութիւնները ԺԱ. ԺԲ. գարերի եւ աւելի յետոյ, յախճապակեղէններ, ազնիւ անօթներ, ասիւծի, թռչունների, սարիկների եւ այլ բուսական ու կենդանական մոտիւններով, մարդկային պատկերներով՝ փայլաներկ կամ սսկեզօծ: Այս ժողովածուն առանձին արժէք է ստանում, որովհետեւ միակն է մեր մէջ, բացի ճարտարապետութիւնից, որ իրական նիւթ է մատակարարում հայ եւ մահմետական արուեստների եւ քաղաքակրթական փոխազդեցութեան, ինչպէս եւ Անիի վաճառականական յարաբերութեանց մասին: Յիշատակելի են կարանների մնացորդները, որ իրենց ձեւերով, օրնամենապիւսով մեզ գողափար են տալիս տեղական արտադրութիւնների մասին, եւ յատուկ ուսումնասիրութեան նիւթ են դարձել Վրացի գիտնական Չուբինաշվիլու կողմից, որ Մառի աշակերտներից մէկն է: Այստեղ է Անիի նկարագրող Ս. Գրիգորի ինը օրմնանկարների արտանկարութիւնը, Լուսաւորչի ցեղը՝ երեսասաղ Նկարիչ Թարխարեանի ձեռքով, որ

կատարել է մեր ղեկավարութեամբ իբրև  
Հնութեանց Պաշտօնութեան կոմիտէի  
նախկին անդամի:

Ապա հայ ճարտարագետութեան մա-  
սին գաղափար են տալիս Լալայեանի լու-  
սանկարչական ժողովածուները, որոնց վրայ  
կ'աւելանան թորամանեանի ժողովածուները,  
զծագրութիւններն ու չափազրութիւն-  
ները, եւ ճարտարագետական բաժինն էլ  
կը դառնայ թանգարանի ուշագրաւ մասե-  
րից մէկը, որի ղեկավար է նշանակուած  
այս տարուանից ճարտարագետ թորաման-  
եանը:

Գրամագիտական բաժինը նոյնպէս կազ-  
մակերպման վիճակի մէջ է. հաւաքուած  
են անտիկ յունական, սելեւկեան, հսով-  
մէական, պարթեւական, սասանեան, հին  
հայկական եւ Ռուբինեանց, Սելջուկեան  
եւլն. գրամներ բաւական թուով, գեմմա-  
նաներ, մի մասը գնուած կամ նուէր  
ստացուած, ինչպէս հանգուցեալ Կ. կոս-  
տանեանցի ժողովածուն է:

Մեր միջնադարեան փայտակերտական  
արուեստի արժէքաւոր քննարկներ են  
Մշոյ Առաքելոց եւ Սեւանի դռները, Անիի  
եւ Նոր Նախիջեւանի քանդակազարդ գրա-  
կալները:

Բ) Պատմական-գրական բաժինը բազ-  
կացած է երկու սենեակից. դահլիճում  
ցուցադրուած են մեր նոր գրականութեան  
նշանաւոր ներկայացուցիչների ձեռագիր-  
ները, նրանց սեպհականութիւն եղած կամ  
նրանց հետ կապ ունեցող իրեր, սրակեր-  
ներ, լուսանկարներ եւլն., օրինակ՝ Գամառ-  
Քաթիպայի, Նալբանդեանի, Սմբատ Շա-  
հաղիլի, Յովհ. Թումանեանի, Գր. Սրճրու-  
նու, եւլն.: Միւս սենեակում հին ձեռա-  
գիրները բաժինն է. 1080 հատորից բազ-  
կացած, որոնց մէջ մի քանիսը գեղար-  
ուեստական-հնագիտական կողմից անգնա-  
հատելի արժէքով, այսպէս թիֆլիսի Մող-  
նու աւետարանը, Մշոյ Առաքելոց Վանքի ե-  
րեքիջեան երկաթագիր մեծ Տօնականը,  
Սմբատ Գունդատապի աւետարանը, Սար-

գիս Պիճակի ամենաճոխ կերպով նկարա-  
զարդուած աւետարանը, եւլն.: Այս ժողո-  
վածուն կազմուած է Նոր Նախիջեւանի,  
Սանատրեան գալրացի հաւաքածուներից,  
այսպէս Հանրային Մատենադարանում, Հա-  
մալսարանում եւ Ամերիկացիների ձեռքով  
հաւաքուած, անհատական նուէրներով կամ  
վարչութեան կողմից հեռահեռէ փոխով  
գնուած ձեռագիրներից: Հնագրական տե-  
սակէտով ուշագրութեան արժանի են Սա-  
նասարեան ժողովածուի մէջ Ժ. գարու-  
կրիկագիր մասերով աւետարանը, նորոգ-  
ուած 1111 թուին եւ կրկնագիր Սաղմոսը՝  
տակը վկայաբանութիւն, որ Ը. գարու է  
համարուում: Եթէ յաջողուի անգնատ կեր-  
պով սրբոյել տակի երկաթագիրը, մեծ  
նշանակութիւն կարող է ունենալ մեր հնա-  
գիյն սօնականների պատմութեան համար:  
Ուշագրութեան արժանի է իւր արծաթա-  
պատ, գեղարուեստական կազմով No 99/94  
աւետարանը, կազմած Անիի շրջանում  
ՁԳԶ (1347) թուին Հոռոմոսի վանքի հա-  
մար: Այս մասի վարիչն է Երուանդ Շա-  
հաղիլ:

Գ) Ազգագրական բաժնի հիմքն է կազ-  
մել Լալայեանի ձեռքով կազմած թիֆ-  
լիսի Ազգագրական Ընկերութեան ժողովա-  
ծուն, որին միացած է Էջմիածնից, որ  
կազմել ենք մենք Սենեքերիմ Տէր Յա-  
կոբեանի աշխատակցութեամբ՝ Դուկոսեան  
եղբայրների եւ այլոց մեզ տրամադրած  
գումարներով: Հարուստ է բաւարար չափով  
Տաճկահայաստանի հարաւային գաւառնե-  
րի տարազը, զարգն ու զարգարանքը, ինչ-  
պէս Մոսկի, Շաստիսի, Թիմարի եւն.: Արե-  
ւելեան Հայաստանից կան Ախալցխայի (եւ  
Լենինականի), Ազուլիսի, Ուսկայիների, որ  
Սելիկեանների նուէրն է, Թիֆլիսի, հարե-  
ւան ազգերից Քրդերի եւ բուշաների տա-  
րաչները, բայց մեծ մասով կանանց մի  
մասը մանէկէնների վրայ հազցրած: Տեւոյ-  
նագարձական կոմիտէն բերել է զանազան  
գործուածքներ, գարգեր, նաեւ մասնաւոր  
նուէրներով եւ գնումներով աւելացած:

քաղաքային միլիցիան ուղարկել է վերջին պատերազմի ժամանակ գործադրուած հրացաններ, գնդացիներ եւն., կայ եւ տեղական, հին գէնքերի փոքրիկ ժողովածու: Հաւարուած են երաժշտական գործիքներ, եւ հին ու նոր սկերչական գործեր:

Ազգապարական բաժինը դեռ եւս կազմակերպման շրջանի մէջ է. ճրագրուած է պատրաստել մանէկէններ, շարժման մէջ, որ եւ է աշխատանք կատարելիս, ցուցադրելու համար դիւղական կեանքը, տնայնագործութիւնը, գորգագործութիւնը, վարն ու ցանքը, գործիքները. ապա հին եւ նոր էրեւանը, հէքեաթներ, ազգապարական-բիւլիոգրաֆիական տեսարաններ, մասամբ միայն ձեւնարկուած Լալայեանի եւ Խաչիկ Սամուէլեանցի աշխատութեամբ, որ պէտք է շարունակուի այդ մասին նոր տեսուչ Ա. Լիսիցեանի ղեկավարութեամբ: Տարբազար ազգապարական Հայաստանը ոչնչացած է պատերազմի ժամանակ եւ այժմ անկարելի կը լինի լիովին վերականգնել այն հարուստ նիւթերը, որով առատ էր Տաճկահայաստանը:

Հաւաքուած են նաեւ ազգապարութեան հետ կապ ունեցող Լուսանկարներ, նեղատիւներ, նաեւ կենցաղը ներկայացնող պատկերներ:

Գ) Թանգարանի մէջ ամենից տարւորիչ է գեղարուեստական բաժինը, ոչ միայն իւր համեմատաբար աւելի հարստութեամբ այլ եւ ցուցադրական յարմարութիւններով: Ձեռագրական գեղեցկութիւնները տեսնելու համար պէտք է բանալ մէկ մէկ նշանաւոր ձեռագիրները, հնագիտական արժէքները գնահատելու համար պէտք է աւելի հասկացողութիւն, մինչդեռ գեղարուեստական պատկերագրութիւնը միանգամից գրաւիչ է, տարւորիչ, եթէ մինչեւ իսկ գիտողը չունենայ հարկաւոր պատրաստութիւնը գեղեցկի տեսութեան եւ ըմբռնողութեան համար: Տասը սենեակ եւ դահլիճ յատկացուած է պատկերասրահի եւ գեղարուեստական իրերի համար. առաջին

դահլիճից ձեր աչքի առաջ ձգուած է այդ բաժնի երկար շարքը. հէնց առաջին բողբոջ կախարգում ձեզ, մարդկային կեանքի եւ ներքին յոյզերի, սպրումների պատկերաւորումը, բազմատեսակ ձեւերով եւ արտաքին երանգաւորութեամբ: Բայց հըրճուածքի զգացմունքով է լցւում մտաւորական գիտողի սիրտը, երբ մտածում է, թէ բնգամենը տաս տարի է, որ գոյութիւն ունի այս հաստատութիւնը, բայց ակներեւ են նորա դարգացման եւ ընդարձակման բոլոր նշանները, եւ թէ ահաւոր պատերազմը մեր ժողովրդին հասցրած սուկալի հարուածներով իսպառ չի ոչնչացրել նորա գոյութեան եւ հոգեւոր քաղաքակրթական վերածնութեան ունակութիւններն ու հնարաւորութիւնները:

Հայ Արուեստագէտների Միութիւնը 1921 թուին կազմել էր իւր ցուցահանգէսը երեւանում. Հայաստանի կառավարութիւնը մեծ մասով գնեց ցուցադրուած պատկերները եւ հիմքը դրաւ գեղարուեստական բաժնի: Ժողովրդական Լուսաւորութեան կոմիտարիատում եւս կային Դաշնակցութեան ժամանակի ցուցահանգէսից զնած մի քանի պատկերներ, որոնց վրայ աւելացան մասնաւորների ժողովածուներ, ինչպէս Լազարեան շեմարանում պահուած հիմնագիրների եւ այլ պատկերներ, Մուկուաբնակ ճարտարապետ Էքիզէրի ժողովածուն, եւ ապա Մոսկուայի եւ Լինինգքրաի Թանգարանային Ֆունդերից կամ Ռուսական Թանգարանից ստացուած պատկերներն ու գեղարուեստական իրերը, նաեւ մասնաւորներից գրաւուած կամ գնուած, դարձան այս բաժնի հարստացման աղբիւրները: Թանգարանի եւ մասնաւորապէս գեղարուեստական բաժնի ճոխացումը առաջ է գնում տարեց տարի, նորանոր գրնումներով կամ խորհ. Միութեան Ֆունդերից ստացուած նուէրներով:

Պատկերասրահը երեք հիմնական մասից է բաղկացած, արեւմտեան, եւրոպական, ուսական եւ հայկական: Արեւմտեան եւրոպայի դասական շրջանից, մանաւանդ ա-

ուսման հարգ վարպետների գործեր, այժմ գծաւոր է ձեռք բերել, բայց չեն պակասում ժէ.-ժԸ. դարու մի քանի օրիգինալներ՝ հոլանտացի Գաւիթ կրտսերի (ժէ. դար), ֆրանսիացի ժոյէֆ Վէրնէի (1714—1789), Գրեոյի (1726—1805), Գիւբէի, Բիբերի, նաև իտալական, գերմանական եւ բելգիական արուեստի ներկայացուցիչների գործեր: Օտար արուեստներից աւելի հարուստ է ուսականը. հնագոյններից յիշելի են Տրոյի-նին եւ Մարտոս, առաջինը հիւսիս, երկրորդը քանդակագործ ժԸ. դարու (կաղարեանների սեպհականութիւն), ապա Չարեանկոյ, Լեփիթան, Մակովսկի, Սէրով, Բէպին, Սամով, Ալէքսանդր Բէնուա, կոստողիէզ, կարովին, Արխիպով, Գուպին, նորերից Մաշկով, Կանչալովսկի, Կուզնեցով, Պետրով, Վուդկին, որոնցից մի քանիսը առաջնակարգ նկարիչներ են եւ ամեն թանգարանի պատիւ, եթէ ունին նրանց գործերից: Յիշատակելի է Եւգենիյ Լանսերիէյի Չանգեզուրի գաւառում վերջերս կատարած էգիւաները, կենցաղական բովանդակութեամբ, տիպեր եւն., որոնք գեղարուեստականի հետ եւ ազգագրական նշանակութիւն ունին:

Ամենից հարուստ բաժինը, բնականաբար, հայ արուեստագէտների գործերն են, սկսած Յակոբ Յովնաթանից մինչեւ նորագոյնները: Այս մասի գնահատելի ժողովածուն հներից Այվազովսկու խոշոր պատկերներն են եւ նորերից Սարեանինը, ամենից աւելի հարուստները: Հներից մի քանի պատկերներով ներկայացուած են Ներսիսեան Ստեփան՝ Բերսեղովի յաջող նկարով, Տէր Մինասեան նախարարածի եւ նախրի հովուական խոշոր պատկերով, բայց սուսական կեանքից, որ բերուած է էջմիածնի թանգարանից, Բաշինջաղեանի մի քանի պատկերները, Վարդգէս Սուրէնեանի մի քանի պատկերները՝ սքանչելի սճաւորութեամբ, ինչպէս Անիի եկեղեցուց դուրս գալու տեսարանն է կամ Չարէլի թագագրութիւնը (1), Թերլէմէզեանի Ստեփանն

(1) Հանգուցեալ Սուրէնեանը մեր նշանա-

ու իւր պատկերը, Թադէոսեանի մի քանի պատկերները, բայց ոչ նորա աւելի յաջող գործերից. Ազաջանեանի բարձր գեղարուեստական պորդէները: Բայց, ինչպէս յիշեցինք, ամենից աւելի հարուստ է Սարեանի ստեղծագործութիւններով, Աշոտ Յովհաննիսեանի, Լուկաշինի, Մակինցեանի, Գարեգին Լեւանեանի եւ ուրիշների շատ յաջող պորտրէներով, նախօր-մօրքերով և արեւելեան կենցաղի տաք, երվներանգ պատկերներով (2): Շատ աւրիշ գործեր ունին նաեւ գրաֆիկ Կոչոյեանը, Առաքելեանը, Ախիկեանը, Գայֆէ Գեանը, քանդակագործ Գիւրջեանն ու Արա Սարգսեանը: Աղքատ են մեր արտասահմանի նկարիչները. մի երկու փորագրութիւն էտկար Շահինն ունի:

Գեղարուեստական իրերը, շինական եւ եւրոպական ազնիւ յախճապակեղէնները, մանր արուեստի վերաբերեալ ահագին քանակութեամբ գործեր մասամբ միայն ցուցադրուած են տեղի պահասութեան եւ մասամբ եւս գեւ կարգաւորած չլինելու պատճառով. խօսք կայ թանգարանի տարածութեան ընդարձակման մասին: Գեղարուեստական մասի ղեկավարն է Իրամբեան՝ նկարիչ Ախիկեանի աջակցութեամբ:

Ընդհանրապէս ստիլիստն էր. նա մտադիր էր հայ հիշեամքների իլլիւստրացիոն հրատարակութիւն պատրաստել, որից մի քանի էտիւզներ տեսել ենք նրա մօտ իւր Լենինգրադի աշխատանոցում, բայց մահուանից յետոյ անհետ կորան: 1915/16 Թուականին ութ ամի չափ աշխատում էր մեզ մօտ՝ Շախիսիմէի վանքում՝ հայ գաղթականների կեանքից էտիւզներ անելով, որ պէտք է գործադրէր աղէտը պատկերաւորով մի մեծ նկարի մէջ: Այդ էտիւզներն այժմ բարեբաղդաբար գտնուում են Յանգարանում եւ ունին նաեւ ազգագրական նշանակութիւն:

Չմեր տաղանդաւոր նկարչի եւ հայ արուեստի համար անփոխարինելի կորուստ եղաւ երկու տարի առաջ նախ խորտակմամբ նորա երեսունի չափ պատկերների ոչնչացումը, որ նա ստեղծագործել էր փարիզում իւր երկամեայ անխնայ աշխատութեամբ եւ ուղարկել Հայաստան:



4. Կուլտուրական կեանքի եւ գիտութեան յառաջագիմութեան ամենակարեւոր պայմաններէն մէկն էլ Մատենադարանն է. գիտութիւնն ու գրականութիւնը ծաղկել եւ սպրեւել կարող չեն առանց հարուստ եւ ճոխ մատենադարանի: Երեւանի Հանրային Մատենադարանը Միանիկեանի անուան, մէկն է Միութեան այն 23 հաստատութիւններէն, ուր ստացուած են նորա սահմաններում լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները, որպէս սրահեր հրատարակչական գործի եւ ոչ սովորական գործածութեան համար. այդ նպատակով ստացուած հրատարակութիւնների թիւն է տարեկան մօտ 75,000: Գիտական փայլի բուն գրադարանը, որ սպասարկում է գիտական աշխատաւորներին, առ մէկն հսկա. 1929 թ. ունէր 450,000 հատոր գիրք. մեծ մասը սուսաց լեզուով եւ քառասուն հազարի չափ հայերէն, եւ ապա եւրոպական այլ եւ այլ լեզուներով. 1929 թ-ուին արտասահմանից ստացուած գրքերի թիւն էր 5000 կտոր: Մատենադարանը գառաւորում է տասնորդական սիստեմով, ինչպէս ընդունուած է միջազգային գրադարանական աշխարհում:

Մատենադարանին կից կայ մանկական եւ մեծերի ընթերցարան, ուր 300 — 600 հոգի օրական յաճախորդներ են լինում. ընթերցարանը բաց է օրական տաս ժամ: Ընթերցարանը իւր յատուկ գրքերն ունի, բայց կարող են օգտուել եւ Հանրային Մատենադարանից, բաց ի այն գրքերից, որ գուրս չեն տալիս: Կայ եւ առանձին կարիներս գիտնական աշխատաւորների եւ հիմնարկների տեղեկանքի համար. տուն են տրւում մանագիտական գրքեր արւեմ-միկնոններով գառախօսներին, գրագէտներին, արուեստագէտներին եւլն.:

Կայ հազուադիւր եւ թանկարժէք գրքերի բաժին, մօտ 2000 հատոր, 1800 թուականից առաջ տպագրուած, որ միայն տեղն ու տեղը կարելի է նայել եւ օգտուել: Մատենադարանն ունի մեծ քանակութեամբ աւելորդ օրինակներ եւս, որ

գործադրում է փոխարինութեան համար: Բիւզժէն շատ մեծ չէ, 41,000 ր., որ հետզհետէ պիտի ընդարձակուի:

Պաշտօնեաների թիւը 20 է, իսկ երեսուն թուականի համար, նախատեսուած է 28 հոգի: Մատենադարանի նոր վարիչն է Գեորգեան, իսկ առաջ՝ հիմնարկութեան օրից Երուանդ Թաղիանոսեանն էր, պրոֆ. Աստուածատուր Խաչատրեանի օգնականութեամբ:

Մատենադարանական գործի մասին պազափար կազմելու համար պէտք է ինկատի ունենալ նաեւ, որ Համալսարանն էլ ունի իւր Մատենադարանը, որի հիմքն է կազմել նախկին Սեմինարիայի մատենադարանը. աւելի գեղեցիկ գրականութեան եւ մանկավարժական գրքեր, գրա վրայ աւելացել են Եւանգուլեանի, Բերբերեանի, Բժ. Ազամեանի, Էլզարովի, Ախարէպեանի, Վահան Տէրեանի, պրոֆ. Ներսիսեանի, բժ. Սունգուլեանի, Ժան Արշակունու ելն. մեծ ու փոքր մատենադարանները, եւ 160 արկղ Լազարեան ձեմարանի մատենադարանից: Տանեակ հազար աւելորդ օրինակներ ունի եւ Համալսարանի մատենադարանը՝ փոխանակութեան ֆոնդի համար: Բուն մատենադարանը կազմում է 60,000 հատորից, չհաշուած Լազարեան ձեմարանից ստացուած 160 արկղը, որ բացուած եւ կարգաւորուած չէ. նոյնչափ էլ բաժին է ընկել Հանրային Մատենադարանին՝ Կազարեան ձեմարանի գազարելուց յետոյ: Համալսարանի մատենադարանը նոր է սկսում կազմակերպուել, որ կը վերջանայ յատուկ շէնքի եւ ընթերցարանի կառուցուելուց յետոյ:

5. Թանգարանի նպատակի, կազմութեան եւ հարտացման հետ ամենասերտ կերպով կապուած է Հնութեանց Պահպանութեան Կոմիտէն. ինչպէս անուշը ցոյց է տալիս, նորա նպատակն է պահել այն հնութիւնները, որոնք ցրուած են մեր հայրենիքի ամէն կողմերը, գլխաւորապէս ճարտարապետական հնութիւնները, բայց եւ

հաւաքել, կորստից փրկել ամէն մի հնութիւն որ երեւան է գալիս որ եւ է տեղ սրտասահման կերպով: Սա եւս այն սակաւաթիւ հաստատութիւններից մէկն է, որ հիմնուած է Գաշնակցութեան ժամանակ, բայց ընդհատուած է պատերազմի պատճառով եւ վերակազմուած խորհ. իշխանութեան օրով, 1923 թուի դեկտ. 13ի գեղրեւոյ, որպէս գեղարուեստի յուշարձանների պահպանութեան եւ կարգաւորեալ ուսումնասիրութեան օրգան: Կոմիտէն սկսուած է հինգ անգամով, իսկ այժմ ստանեւորս անգամ ունի, որի նախագահն է ակադեմիկ թամանեան եւ գիտնական քարտուղարը Աշխարհէյ Քալանթար: Թանգարանի վարչութիւնն էլ իւր ներկայացուցիչներն ունի այնտեղ: Ունի եւ թղթակից անդամներ, կամ ներկայացուցիչներ զանազան վայրերում, 83 հոգի, որոնք սեզոնային թիւներ են հաղորդում կամ հաւաքում են իրենց շրջանի կորստեան ենթակայ հնութիւններ՝ աւանց վարձատրութեան: Ունի պահակներ, ուր առանձին հսկողութեան պէտք կայ:

Կոմիտէի գործունէութեան շրջանն է հնութիւնների ցուցակագրութիւն, նկարագրութիւն, չափազուցութիւն, արձանագրութիւնների ընթերցում, լուսանկարում կամ էստամբաժների պատրաստում, տեխնիկական վիճակի պարզում, եւ հարկաւոր գէպքում օգնութիւն քանդուող շէնքերին:

Հայաստանը բաժանուած է քսան հնագիտական շրջանի, կոմիտէն յոյս ունի թէ այս վերջին երեք տարուայ ընթացքում կարող պիտի լինի բոլոր ցուցակագրել եւ հնութեանց քարտէզ կազմել: Նա է ձեռնարկում հնագիտական արշաւանքների, պեղումների և հաւաքած նիւթերի ուսումնասիրութեան. նա է իրաւունք տալիս գրքից եկած գիտական խմբերին կամ մասնաւոր գիտնականներին հնագիտական ուսումնասիրութիւններ կատարել այս կամ այն շրջանում, կապ է պահպանում Միութեան եւ արտասահմանի նման հաստատութիւնների հետ:

Մինչեւ այժմ 105 գեղուցում է արուած, հնութիւնների պահպանութեան վերաբերեալ կամ գիտական, հետազոտական բովանդակութեամբ, հրատարակել է եւ մի տարակ՝ «Օրագիր» անուանով՝ No 3, որ հաստատութեան օրգանը պիտի լինի, նուիրուած երկու սեզոնային արձանագրութեան լուսարանութեան: Գոցանից մէկը գտնուում էր Նոր Բայազիտի գերեզմանատանը, յայտնագործուել է թագ. Աւագաբէյեանի ձեռքով, եւ պահոււմ է ժամանակաւորապէս Հնութեանց Պահպանութեան աշխատանոցում:

6. Եթէ Համալսարանը, կոնսերվատորիան, նկարչական դպրոցը այն հաստատութիւններն են, որոնք հետամուտ են տեսականի հետ աւելի գործնական նպատակների, ուժեր պատրաստելու պետական հիմնարկների, կոոպարութեան, ժողովրդական կրթութեան եւ գեղարուեստական գաստիարակութեան համար, Գիսուբեան եւ Արաբսի Ինստիտուտը զուտ գիտական-գեղարուեստական ուսումնասիրութեան, հետազոտութեան ամենաբարձր հաստատութիւնն է, թէ եւ վերջնական նպատակը պարձեալ գործնականի հետ կապուած: Նա գիտութեան եւ արուեստի տեսական մշակութիւնը գլխաւորապէս կեդրոնն է, զուտ գիտական-գեղարուեստական աշխատակարարների կաճառ, որի անգամակցութեան հրաւիրում են այն անձնակազմութիւնները միայն, որոնք արդէն որոշ չափով ցոյց են տուել իրենց կարողութիւնն ու արդիւնասիրութիւնը իրենց մասնագիտութեան մէջ եւ յոյս են ներշնչում գեղավար հանդիսանալու այդ ասպարէզում: Իրականում ակադեմիական այդ կաճառի անդամներ են Համալսարանի եւ կոնսերվատորիայի աչքի ընկնող զասնախօսները, թանգարանի եւ գրականութեան նշանաւորագոյն ներկայացուցիչները, բայց նաեւ մասնաւոր գիտնականներ, որոնք կապուած չեն հաստատութիւնների հետ:

Հայաստանի Գիտութեան եւ Արուեստի

Ինստիտուտը երեք բաժին ունի. բնապատմական - մաթեմատիկական, սպասմագիտական - հասարակագիտական եւ գեղարուեստական: Գերագոյն մարմինը անդամների ընդհանուր ժողովն է, որ ընտրում է Գործադիր մարմինն եւ Խորհուրդ՝ նախագահութեամբ. իւրաքանչիւր բաժին ունի իւր գիտնական քարտուղարը: Անդամները կարող են լինել իսկական, որ միայն Հայաստանի Հանրապետութեան սահմաններում ապրող գիտնականներից եւ գեղարուեստագէտներից են ընտրուում, ապա պատուաւոր եւ թղթակից, որոնք կարող են եւ ուրիշ երկիրների քաղաքացիներ լինել: Ինստիտուտը կապ է պահում Միութեան եւ արտասահմանեան նման հաստատութիւնների հետ:

Այս հաստատութիւնը բացուեցաւ նախ 1921 թուին Աշոտ Յովհաննիսեանի Լուսժողովումութեան ժամանակ եւ հաստատուած էր էջմիածնում. նորա իրաւասութեան ենթարկելով էջմիածնի մատենադարանը, թանգարանը եւ տպարանը, որոնք յեղափոխութեան հետեւանքով պետականացած էին. այս շրջանի անդամների թիւը սահմանափակ էր եւ նորա արդիւնքն եղաւ «Բանբեր» ամուսնով (1921—22 թ.) ստուար, գիտական ժողովածուն: Բայց երեք տարուայ դադարից յետոյ՝ վերակազմուեցաւ 1925 թ. եւ ներկայ կերպարանքն ստացաւ, իւր գործունէութիւնն սկսելով նոյն թուականի դեկտեմբերից:

Բայ ի կազմակերպական աշխատանքներից այս հինգ տարուայ ընթացքում հրատարակուած է Ինստիտուտի կողմից տարեկան մի հատոր «Տեղեկագիր» (հինգերորդ հատորը մամուլի տակ է) մեծ մասով հայ անցեալի, պատմութեան, գրականութեան եւ արուեստին վերաբերեալ ուսումնասիրութիւններ, բայց նաեւ բնագիտական եւ հասարակագիտական: Տեղեկագրի մէջ չեն մտած բոլոր գիտական ղեկուցումները, որ կարգացուած են նիւստերում: Չենք կամենում մանրամասնութիւնների մէջ մտնել, բայց հրատարակ-

ուած հատորները իրենց լուրջ ուսումնասիրութիւններով հաւատ են ներշնչում, թէ այդ հաստատութիւնը հետզհետէ զգալի դեր պիտի կատարէ եւ արդիւնաւոր հանդիսանայ հայ ժողովրդի ներկայ եւ անցեալ կեանքի, արուեստի և քաղաքակրթութեան գիտական ուսումնասիրութեան մէջ, ինչպէս եւ երկրի բնական ուսումնասիրութեան:


7. Մեզ մնում է մի քանի խօսք ասել եւ Պետական Թատրոնի մասին, որ վաղաժամորեն եւ գեղարուեստական մշակովթի տարածման լաւագոյն միջոցն է ժողովրդական բազմութեան մէջ, խթանն է գրականութեան որոշ ճիւղերի, գերասանական եւ երաժշտական, ինչպէս եւ նկարչական դեկորատիւ արուեստների զարգացման, քաղաքակրթական կեանքով ապրող ազգերի անհրաժեշտ հաստատութիւններից մէկը: Թատրոն, գերասանական խմբեր ունէինք եւ տոռջ. բայց ոչ իբրեւ մշտատեւ հաստատութիւն, այլ անհամարների եւ ընկերութիւնների ձեռներէցութեան հետ կապուած, որ շատ անգամ ընդհատուում էր եւ անյաջողութիւնների ենթարկուում: Այժմ ունինք պետական մի հաստատութիւն, մըշտական, ապահով, կարգաւորեալ կազմակերպութեամբ, որ տարէց տարի կատարելութեան է ձգտում, հետեւում է նման հաստատութիւնների նուաճումներին եւ հետամուտ է գործնական դեր կատարել ժողովրդի մտաւոր, գեղարուեստական կեանքի եւ կենցաղի կատարելութեան մէջ, իւր շուրջը խմբելով գերասանական բոլոր կարող ուժերը, գրականագէտներն ու երաժիշտները, որ յատուկ սաղանդ ունին իրենց գրիչը արդիւնաւորելու բեմական գրականութեան եւ երաժշտութեան համար:

Պետական Թատրոնը տեղաւորուած է դեռ եւս հին շէնքում, բայց այս տարուանից արդէն պիտի սկսուի նորի շինութիւնը ակադեմիկ Թամանեանցի ծրագրով, որ պատրաստ է եւ հաստատուած: Նոր Թատ-

րոնք երկու մաս պիտի ունենայ՝ ձմեռնա-  
յին՝ 1200 հոգու համար (Պաս. 2) և ամառ-  
նային՝ 1700 հոգու համար (Պաս. 3). դա  
ամենախոշոր շէնքը պիտի լինի Խորհ. Հա-  
յաստանի մէջ, հայկական ճարտարապե-  
տական հոգևով թափանցուած մի ստեղ-  
ծագործութիւն, յատկապէս՝ ճակատներն  
ու ներսի յարդարումը, ի հարկէ, ներկայ

կան բարձրագոյն հաստատութիւնների հա-  
մար :

Յ. Քանի որ խօսք եղաւ արդէն Հա-  
մալսարանի եւ գեղարուեստական հաստա-  
տութիւնների արուարձանների մասին, մի  
քանի խօսք էլ աւելացնենք քաղաքի ընդ-  
հանուր վերակառուցման նկատմամբ: Թէ-



Պատկեր 2.— ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՁՄԵՌՆԱՅԻՆ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԸ

ժամանակի պահանջներին յարմարեցրած:  
Թամանեանցի անճնաւորութիւնը, գեղար-  
ուեստական հմտութիւնն ու ճաշակը, կա-  
րողութիւնը, մի մեծութիւն Խորհ. Միու-  
թեան չափանիշներով, լաւագոյն առհա-  
ւատչեան է այդ կարեւոր գործի յաջողու-  
թեան: Հիւսիսային կողմում պիտի լինին  
նաեւ ուրիշ շէնքեր՝ երաժշտական նուագա-  
խմբի, ընթերցարանի համար, եւլն.:


ժողովրդական Տունը, — այսպէս է կոչ-  
ւում թատրոնը եւ նորա կապուած միւս  
շէնքերը, — պէտք է շրջապատուի 4% հեկ-  
տար տարածութեամբ պարտիզով, բուրս-  
տաններով և շատրուաններով զարդարուած,  
պարտիզի մի կողմը հմնսերվատորիայի նոր  
շէնքը պիտի լինի եւ միւս կողմը գեղար-  
ուեստական գպրոցը: Այսպիսով մի առան-  
ձին թաղ պիտի կազմուի գեղարուեստա-

պէս նիւթական շինարարութիւնը մեր  
ինդրից գուրս է, բայց քաղաքի նոր ձեւա-  
կերպութիւնն ու վերակառուցումն էլ  
ինքնըտոյնքեան գեղարուեստական մի մեծ  
գործ է, սրի մասին արժէ ընթերցողին  
զարգափար տալ: Ծրագիրը կազմուած է ա-  
կադեմիկ թամանեանցի կողմից՝ նմանու-  
թեամբ եւրոպական պարտէզ-քաղաքների,  
եւ եռանդուն կերպով առաջ է տարուում  
իրագործումը. ափսո՛ս, ձեռքի տակ չու-  
նինք ամբողջութեան լուսանկարը, աւելի  
պարզ զարգափար տալու համար:

Համալսարանի եւ գեղարուեստական  
հաստատութիւնների արուարձանների մա-  
սին խօսք եղաւ արդէն. քաղաքի կեդրոնը  
պիտի կազմեն պետական հիմնարկութիւն-  
ների շէնքերը, որոնք աւելի խոշոր են եւ  
աչքի պիտի ընկնեն իրենց գեղարուեստա-

կան ճակատներով եւ զարդարանքներով՝ համեմատ հայ ճարտարապետական արուեստի: Իրանցից մի քանիսն արդէն պատրաստ են, ինչպէս հողժողովմանի գեղեցիկ շէնքը, Թամանեանցի ձեռքով, գիւղատնտեսական բանկի եւ քաղխորհրդի շէնքերը, մեծ հիւրանոցը, ճարտարապետ Բունիաթեանի. ֆինժողովման ստացել է եւս

Քաղաքի մի ատանձին գեղեցկութիւնը պիտի լինի լիճը՝ Չանգու գետի վրայ, շուրջը բուսաբանական այգին, ափերը կապուած միմեանց հետ կամուրջներով: Քաղաքի հիւսիս-արեւելեան բարձունքներն արդէն իսկ ծածկուած են տարէց տարի արհեստական անտառներով: Քաղաքը վերաշինուած է 300.000 բնակչութեան հա-



Պատկեր 3.— ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԸ

մի վերին յարկ, շինուած է ապահովագրական հիմնարկութեան շէնքը: Սրանց շուրջը պիտի տարածուին քաղաքացիական բնակարանները, որոնց համար կարեւորը գեղարուեստական խնդիրները չեն, այլ էժան, յարմար եւ առողջ բնակարանը. այս կարգի բազմաթիւ շէնքեր են կառուցուել եւ շարունակուած են որոշ շրջաններում, ողջ քաղաքը գործատան վերածած: Այս ատանձին արուարձան պիտի կազմի արդիւնաբերական ձեռնարկների շրջանը, կապուած երկաթուղու հետ: Փողոցները երկու կողմից, մայթերի ուղղութեամբ, պէտք է զարդարուին ծառերով, եւ ապա պարուէգներն ու հրապարակները, հաւել մանկական, շրջապատուած առատ կանաչով, պիտի նպաստեն օգի բարեխառնման եւ մաքրութեան: Ի նկատի է առնուած եւ քամիների ուղղութիւնը, բնակարանները փոշուց ազատ պահելու համար:

խառնութեամբ, այժմ ունի 80 հազար բնակիչ:

Վերջացնենք մեր թուուցիկ եւ միայն ծանօթութեան համար կատարած պատյար, որ բաւարար ապացոյց պիտի համարուի, թէ հայ ժողովուրդն արժանի է խաղաղ եւ ստեղծագործող կեանքի պայմաններ ունենալու: Երեւանի թանգարանը, էջմիածնի հազարաւոր ձեռագիրների ժողովածուն, մեր ճարտարապետական շէնքերի կանգուն եւ աւերակ հարիւրաւոր յուշարձանները անցեալից ժառանգած, հոգեւոր, հարուստ գանձերն են, որ պէտք է շահագործուին քաղաքակրթական-գեղարուեստական մի նոր հեռանկարի ստեղծման մէջ. Համալսարանի, Հանրային Մատենադարանի, գեղարուեստական Հաստատութիւնների ծագումն ու ձգտումը կատարելութեան շուրջում՝ կենդանի առհասարակ են, թէ մեր

Ժողովուրդը, որքան եւ ճղակոտոր ահաւոր պատերազմի հետեւանքներով, սկսել է նոր սասեր արձակել, իւր վերքերը բուժել եւ կուլտուրական մի նոր կեանքով ապրել:

Հաւատա՛նք մեր ժողովրդին պահուած լուաղօյն ապագային:

Գ. ԱՐՔԵՊՍԿ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Նոր Նախիջևան, 1930

# Պ Ր Ո Մ Ե Թ Ե Ի Ս Ա Ր Ձ Ա Կ Ո Ւ Ա Ծ

## Թ Ա Տ Ե Ր Ա Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ծ Չ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ

### Բ. Ա Ր Ա Ր

#### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Անհատ մը, ժայռերով ու քարայրներով ցանցրնուած: Ասիա եւ Պանքաս հոն կը մտնեն: Երկու դեռասի Պայեռ, ժայռի մը վրայ նստած են ու կ'ունկնկարեն:

#### Ա. ԿԻՍՍՊԱՐ ՈԳԻՆԵՐՈՒ

Երահուր՝ որուն մէջէն՝ անցաւ այդ դոյզը չքնաղ, Մայրիներու, շածիներու եւ գեղձերու երկայնքին, Ինչպէս նաեւ ամէն ճրուայլ ծառի քովէն որ կ'աճի, Քողարկուած է, զուրս կը ձրնայ երկնից անհուն կապոյտէն:

Ոչ արեգակ եւ ոչ լուսին, ոչ հով եւ ոչ ալ անձրեւ, Կրնան անոր իրերահիւս սասերուն մէջ թափանցել. Ոչինչ, ճիւղն՝ ցօղի սոճի ճը թափառիկ, Որ գետնատող սիւրբին շունչէն կը տարուի, Ու եղեամէն արեւորած ծառերու Բուներուն մէջ շրջելով, Մարգարիտներ կը կախէ, նորափրթիթ ու կանանչ Գափնիին մէն ձի տփոյն ճաղիկին, ձինչ զիւրաբեկ Ընեճոն ճը գեղեցիկ՝ իր ճակատը կը հակէ

եւ անշքուկ կը խածրի. կամ երբ անթիւ սասերէն Մէկը որ ծաթ զիշերով կը ճագլցի, կը շրջի, եւ կը գտնէ ձերպն ուրիշ կրնան ճիւղն՝ բարձունքէն՝

Այդ խորութեանց վրայ թափիլ ճառագայթներ՝ երբ գեռ ինք

Հեռու, հեռու չէ քըշուած, Երագալագ երկինքէն որ չի կրնար յամենալ Ու կը սրբուէ ոսկի լոյսի կաթիլներ, Գիճերու պէս անձրեւի, որ երբեք չեն ձիւնար. Ծուրջը՝ խաւարն սասուածային կը տիրէ, Վարը՝ հողն է ճամուագաս:

#### ԿԻՍՍՊԱՐ Բ.

Հոն՝ տխրակներն հեշտասէր, Օր ցերեկով արթուն են: Երբ մէկն անոնց նըւաղի, երանութեամբ կամ վիշտով,

Ու բաղեղին հովազուրկ սասերուն մէջ՝ զլլարի Քաղցրը սիրով յափրացած ու ճահամերձ վիճակով, Իր քնկերոջ նըւաղէ թրթրացող կուրծքին վրայ, Ուրիշ մ'անդին՝ օրորուն կոկոնէ ճը կը սպասէ Վերջին խաղին նըւաղուն աւարտումին, եւ ահա, Վատուժ երգին թեւերուն թափ ճը կուտայ սրլացիկ, Մինչեւ յուղճան նոր երա՛կ մ'այլ մեղեղին վեր բըռնէ.